ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)704010
21 դեկտեմբեր 2023 թ. N 2949

«Գ Դ Ս» ԲԸ ՏՆՕՐԵՆ
Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար 2022 թվականի օգոստոսի 12-ին «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-22/40» ծածկագրով հայտարարվել էր գնանշման հարցում «Հրազդան քաղաքի Կենտրոն և Միկրոշրջան թաղամասերում, Քաղսի, Սոլակ, Լեռնանիստ և Ջրառատ գյուղերում կանգառների կառուցման և Հրազդան համայնքի երկու անվանական մուտքերի լուսավորության համակարգի կառուցման» աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով: Սույն գնման գործընթացը կազմակերպվել էր ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետը, համայնքի ավագանու սույն թվականի դեկտեմբերի 7-ի N 211 որոշմամբ, «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-22/40» ծածկագրով գնման ընթացակարգի երկրորդ չափաբաժինը՝ «Հրազդան համայնքի երկու անվանական մուտքերի լուսավորության համակարգի կառուցման» աշխատանքները, հայտարարվել են չկայացած:

Հրազդանի համայնքապետարանը միակողմանի և ամբողջությամբ լուծում է Հրազդանի և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի միջև 28 սեպտեմբերի 2022 թվականին կնքված պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Գնումների և զարգացման ծրագրերի
բաժնի պետ՝ Ք. Բաղդասարյան
Հեռ. (060) 70-40-21